ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«19» օգոստոսի 2024 թվական N 1635-Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 01-Ի N 363-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ ու 34-րդ հոդվածներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի՝ 2024 թվականի մարտի 1-ի 11007 «Շուկաների զարգացում և միջազգային համագործակցություն» միջոցառման ծրագիրը հաստատելու մասին» N 363-Ա հրամանի Հավելվածի.

1) 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Միջոցառման 2024 թվականի ֆինանսական միջոցների պլանային բաշխվածությունը ներկայացված է ստորև.

Հ/Հ	Միջոցառման անվանում	Անցկացման վայր	Ժամանակահատված	Ընդհանուր բյուջե ՀՀ դրամ
1	«Քնվրջնս Ինդիա 2024» (Convergence India 2024)	Նյու Դելի, Հնդկաստանի Հանրապետություն	17-19 հունվար, 2024	8,368,339

2	«Համաշխարհային բջջային կոնգրես 2024» (Mobile World Congress Barcelona)	Բարսելոնա, Իսպանիայի Թագավորություն	26-29 փետրվար, 2024	37,901,122
3	«Վիվաթեք 2024» (VivaTech 2024)	Փարիզ, Ֆրանսիայի Հանրապետություն	22-25 մայիս, 2024	53,598,356
4	«ԴիջիԹեք 2024» DigiTec 2024	Երևան, Հայաստանի Հանրապետություն	4-7 հոկտեմբեր, 2024	15,250,000
5	«Տիեզերագնացության միջազգային 75-րդ համաժողով» IAC 2024	Միլան, Իտալիայի Հանրապետություն	14-18 հոկտեմբեր, 2024	53,984,000
6	«Այդեքս 2025» IDEX 2025	Աբու Դաբի, Արաբական Միացյալ Էմիրություններ	17-21 փետրվար, 2025	40,150,098
7	«Համաշխարհային բջջային կոնգրես 2025» (Mobile World Congress Barcelona)	Բարսելոնա, Իսպանիայի Թագավորություն	3-6 մարտ, 2025	40,420,573
8	«Դեֆեա 2025» (DEFEA 2025)	Աթենք, Հունաստան	6-8 մայիս, 2025	25,000,000
9	«Վիվաթեք 2025» (VivaTech 2025)	Փարիզ, Ֆրանսիայի Հանրապետություն	11-14 հունիս, 2025	30,000,000
10	«Ջայտեքս 2025» (GITEX 2025)	Դուբայ, Արաբական Միացյալ Էմիրություններ	13-17 հոկտեմբեր, 2025	30,000,000

2) 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15. 2024 թվականի ընթացքում ծրագրվում է կազմակերպել 3 գործարար ֆորում՝ նախատեսելով 5,327,512 ՀՀ դրամ:»

3) 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16. Հաշվի առնելով վերոնշյալ նպատակները՝ ծրագրի գնահատման ոչ ֆինանսական ցուցանիշները թվարկված են ստորև.

ՑՈՒՑԱՆԻՇ	ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ
Միջազգային ցուցահանդեսներին մասնակցություն «Հայաստան» տաղավարով, հատ	5
Հայաստանում կազմակերպվող ֆորումների քանակը, հատ	3
Միջազգային ցուցահանդեսներին, ֆորումներին մասնակցության արդյունքում կնքվող պայմանագրերի քանակը, հատ	առնվազն 4
Հաջորդ տարում անցկացվելիք միջազգային ցուցահանդեսների քանակը, որոնց համար հատկացվելու է մասնակցության կանխավճար, հատ	5

8/19/2024

X

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Signed by: HAYRAPETYAN MKHITAR 2505901047

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ